

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱԳՐՈՐԻԶՆԵՄԻ ԵՎ ԳՅՈՒՂԻ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

հոգաբարձուների խորհրդի
որոշմամբ

09 հունվարի 2016 թ.

(արձանագրություն #46)

կազմված է 09.01.2016թ.

բաղկացած է 14 /տասնչորս/ էջից

Հիմնադրամի տնօրեն

(Գագիկ Սարգսյան)

APPROVED BY RESOLUTION OF BOARD OF
TRUSTEES OF THE "CENTER FOR
AGRIBUSINESS AND RURAL
DEVELOPMENT" FOUNDATION

Dated 09 January 2016

(Minutes #46)

Composed on 09.01.2016

from 14 (fourteen) pages

Gagik Sardaryan, Director of the Foundation

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀՀ իրավաբանական անձանց պետական
նեգիստրի կենտրոնական մարմնի կողմից

15 սեպտեմբերի 2004 թ.

ՀՎՀՀ 01551153

Գրանցման թիվ 222.160.00390

Վկայական 03 Ա 065375

Թիվ 004.3 փոփոխությունը գրանցվել է

իրավաբանական անձանց պետական նեգիստրի
կենտրոնական մարմնի կողմից «27»

հունվարի 2016 թ.

Պետական նեգիստրի ղեկավար

Գ. Սեդրաչյան

Printed in 2 duplicates only

Duplicated 1

REGISTERED with

The Central Office of the RA State Register Agency

of Legal Entities on 15 September 2004

Registration number: 222.160.00390

Certificate: 03 Ա 065375

Amendment #... registered on _____ 20--, with

the Central Office of the RA State Register Agency of
Legal Entities

Head of the State Register,

(_____)

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրություն)

**« Ա զ Բ Ո Ք Ի Ձ Ն Ե Մ Ի Ե Վ Գ Յ Ո Ւ Ղ Ի
Չ Ա Ր Գ Ա Յ Մ Ա Ն Կ Ե Ն Տ Բ Ո Ն »
Հ Ի Մ Ն Ա Գ Բ Ա Մ Ի
Կ Ա Ն Ո Ն Ա Գ Բ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**CHARTER OF THE CENTER FOR
AGRIBUSINESS AND RURAL DEVELOPMENT**

ք. Երևան, 2015 թ.

Yerevan, 2015

1. Ընդհանուր դրույթներ

1. General Provisions

1.1. «Ազրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամը (այսուհետև՝ Հիմնադրամ), կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծած և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է բարեգործական, սոցիալական, գիտական, կրթական, բնապահպանական և այլ հանրօգուտ նպատակներ:

1.1. The “Center for Agribusiness and Rural Development” Foundation (hereinafter referred to as the “Foundation”) is a non-commercial organization established based on voluntary contributions of property, does not have membership, and pursues social, scientific, educational, environmental and other public benefit goals.

1.2. Հիմնադրամի հիմնադիրն է ԱՄՆ քաղաքացի Նորմա Ջին Մարտինը (Martin Norma Jean), ծնված 1933 թվականի օգոստոսի 27 – ին, անձնագիր 154496138, տրված 14 հունիսի 1996թ., որի բնակության վայրն է՝ 105 Գլենսայդ պողոտա Վիլմինգտոն, ԴԵ 19803 (105 Glenside Ave. Wilmington, DE 19803): Հիմնադրամը հանդիսանում է «ՔԱՐԴ» Ջարգացման Հիմնադրամի իրավահաջորդը՝ (23.02.2010թ., պետ գրանցման վկայական՝ 03 Ա 086180, գրանցման համար՝ 222.160.01186, ՀՎՀՀ՝ 01570052, գրանցման վայր՝ 009, ՀՀ ք. Երևան, Տեղյան փ. 74) փոխանցման ակտին համապատասխան:

1.2. The Founder of the Foundation is: US citizen Martin Norma Jean (DOB: 27 August 1993, Passport number: 154496138, Date of issuing: 14 June 1996, Resident address: 105 Glenside Ave. Wilmington, DE 19803).

«ՔԱՐԴ» Ջարգացման Հիմնադրամի հիմնադիրներն են՝ «ԱՐԻԴ» այժմբուծական սպառողական կոոպերատիվը (հիմնադրման վայրը՝ Հայաստանի Հանրապետություն, գրանցման տարեթիվ՝ 27.09.2004թ., պետական գրանցման վկայականի համար՝ 03Ա 063183, գրանցման համար՝ 65.090.00486, հասցեն՝ ՀՀ Վայոց Ձոր, ք. Եղեգնաձոր, Երևանյան խճուղի 1) և ԱՄՆ քաղաքացիներ՝ Ջեֆրի Էդուարդ Էնգելսը (անձնագիր 710996297, տրված 19.10.2006., ԱՄՆ Պետ. Դեպարտամենտի կողմից, հասցեն՝ ԱՄՆ, Կալիֆորնիա) և Բիլլ Րեյ Միլլերը (անձնագիր՝ 215156516, տրված 12.10.2005թ., ԱՄՆ Պետ. Դեպարտամենտի կողմից, հասցե՝ ԱՄՆ, Ալաբամա):

“ARID” Goat Consumer Cooperative (Venue of establishment- RA, date of registration:27.09.2004, State certificate registration N03A 063183, registration N 65.090.00486, Address: Yerevanyan highway 1, Yeghegnadzor, Vayots Dzor, RA), and US citizens Jeffrey Eduard Engels (Passport number: 710996297, Date of issuing: 19.10.2006 by USDA, Resident address: California, USA) and Billy Ray Miller (Passport number: 215156516, Date of issuing: 12.10.2005 by USDA, Resident address: Alabama, USA).

1.3. Հիմնադրամի գործունեության սկզբունքներն են՝ օրինականությունը, ժողովրդավարությունը, մարդասիրությունը, կամավորությունը և հրապարակայնությունը:

1.3. Principles of the Foundation activity are rule of law, democracy, philanthropy, voluntarism and publicity.

1.4. Հիմնադրամը հիմնադրվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության (այսուհետև՝ Օրենսդրություն) համաձայն: Իր գործունեության ընթացքում Հիմնադրամը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի

1.4. The Foundation has been established in conformity with the legislation of the Republic of Armenia (henceforth, the “RA legislation”). In the course of its activity, the Foundation is governed by the Constitution of the Republic of Armenia,

Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետև՝ Օրենք), այլ օրենքներով ու իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Հիմնադրամի հայերեն լրիվ անվանումն է՝ «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ: Հիմնադրամի անգլերեն լրիվ անվանումն է՝ «Center for Agribusiness & Rural Development» Foundation:

1.6. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակված:

1.7. Հիմնադրամի հնարավոր շահառուներն են՝ Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքները և նրանց բնակիչները և Հայաստանի Հանրապետության գյուղացիական տնտեսությունները, գյուղմթերք վերամշակողները, վերոնշյալ բնագավառներում քաղաքականություն մշակողները և գիտաշխատողները:

1.8. Հիմնադրամն իր գործունեությունը ծավալում է Հայաստանի Հանրապետությունում և այլ արտասահմանյան պետություններում՝ տվյալ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

1.9. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0037, քաղաք Երևան, Ազատության պողոտա 1/21,40:

2. Հիմնադրամի իրավական կարգավիճակը

2.1. Հիմնադրամը ստեղծված է համարվում Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

2.2. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ունի Հիմնադրի գույքից առանձնացված գույք, որը հաշվարկվում է ինքնուրույն հաշվեկշռում:

2.3. Հիմնադրամն իրավունք ունի իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

2.4. Հիմնադրամն իրավունք ունի Օրենսդրությամբ սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում՝ Հայաստանի Հանրապետության դրամով և (կամ) արտարժույթով:

2.5. Հիմնադրամն ունի իր անվանումը պարունակող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր (հայերենով իր անվանման պարտադիր նշումով), ինչպես նաև անհատականացնող այլ միջոցներ:

2.6. Հիմնադրամն իրավունք ունի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ փոփոխել սույն կանոնադրությունը:

3. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները

3.1. Հիմնադրամն իրավունք ունի Օրենքին և իրավական այլ ակտերին համապատասխան ստեղծել

International Treaties signed by the Republic of Armenia, the RA Civil Code, the Law of the Republic of Armenia on Foundations (henceforth, the “Law”), other laws and legal acts, and this Charter.

1.5. The full name of the Foundation in Armenian is ,Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամ: The full name of the Foundation in English is “Center for Agribusiness and Rural Development” Foundation.

1.6. The term of the activity of the Foundation is not limited.

1.7. Potential beneficiaries of the Foundation are rural communities of the Republic of Armenia, residents of rural communities, farms/farmers, agricultural products processors, and policy makers and researchers/scientists of the aforementioned industries.

1.8. The Foundation expands its activities in the Republic of Armenian and foreign states, in compliance with respective governing legislation of hosting states.

1.9. The address of the Foundation is 1/21,40 Azatutyun ave., Yerevan 0037, Republic of Armenia.

2. Legal Status of the Foundation

2.1. The Foundation is considered created from the date of its state registration in accordance with the manner stipulated by the Law.

2.2. The Foundation is a legal entity and it has separated property accounted in its own balance sheet.

2.3. The Foundation, on its behalf, has the right to acquire and exercise property and personal non-property rights, bear responsibilities, and act as a plaintiff or a defendant in the court.

2.4. The Foundation, in the manner stipulated by laws, has the right to open bank accounts in the Republic of Armenia and in the banks of foreign states, in Armenian drams (AMD) and/or foreign currency.

2.5. The Foundation has a round seal bearing its name, stamps and letterheads (containing its name in Armenian language), as well as other means of identification.

2.6. The Foundation has the right to amend this Charter by the decision of the Board of Trustees.

3. Separated Subdivisions and Institutions of the Foundation

3.1. The Foundation has the right to create separated subdivisions (branches and representations) and

առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ:

3.2. Հիմնադրամի կողմից օտարերկրյա պետություններում առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումն իրականացվում է այդ երկրների օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխան, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այլ բան նախատեսված չէ:

3.3. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկներն իրավաբանական անձինք չեն ու գործում են Հիմնադրամի հաստատած կանոնադրությունների հիման վրա:

3.4. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանման կամ հիմնարկի անվանումը պետք է պարունակի Հիմնադրամի անվանումը:

3.5. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գույքը տրամադրվում է Հիմնադրամի կողմից: Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների գույքի արժեքն արտացոլվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ Հիմնադրամի հաշվեկշռում և համարվում է Հիմնադրամի սեփականությունը:

3.6. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Հիմնադրամի կողմից ու գործում են լիազորագրի հիման վրա:

3.7. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների պարտավորությունների համար գույքային պատասխանատվություն է կրում Հիմնադրամը:

3.8. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկներն ստեղծված են համարվում համապատասխան որոշման ընդունման պահից:

3.9. Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները հաշվառվում են Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

4. Հիմնադրամի իրավունքներն ու պարտականությունները: Հիմնադրամի պատասխանատվությունը

4.1. Հիմնադրամը ինքնուրույն է որոշում իր կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը:

4.2. Հիմնադրամն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակները և խնդիրները իրականացնելու համար օրենքով սահմանված կարգով իրավունք ունի՝

4.2.1 նյութապես աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց, այդ թվում՝ տրամադրել դրամաշնորհներ, նվիրատվություններ, փոխառություններ, իրականացնել ֆինանսավորում.

4.2.2 անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին.

institutions in compliance with the Law and other legal acts.

3.2. The creation of separated subdivisions and institutions in foreign countries is carried out in accordance with laws and other legal acts of those countries, unless otherwise stipulated by international treaties signed by the Republic of Armenia.

3.3. Separated subdivisions and institutions of the Foundation are not legal entities and act in compliance with charters approved by the Foundation.

3.4. The name of the separated subdivision or the institution of the Foundation shall include the name of the Foundation.

3.5. The property of separated subdivisions or and institutions of the Foundation is provided by the Foundation. The value of property of separated subdivisions and institutions of the Foundation shall be reflected both in their separate balance sheets, as well as in the balance sheet of the Foundation, and shall be considered the property of the Foundation.

3.6. Managers of separated subdivisions and institutions of the Foundation shall be appointed by the Foundation and act based on power of attorney.

3.7. The Foundation shall bear property accountability for the liabilities of the Foundation's separated subdivisions and institutions.

3.8. The separated subdivisions and institutions of the Foundation are considered established from the date of adoption of a respective decision.

3.9. The separated subdivisions and institutions of the Foundation are registered in the manner stipulated by the Law and other legal acts.

4. Rights and Obligations of the Foundation; Responsibility of the Foundation

4.1. The Foundation independently decides on its structure, objectives, goals and types of activity.

4.2. For implementation of goals and objectives stipulated by its Charter, the Foundation has the right to:

4.2.1 Provide material assistance to natural and legal persons, including grants, donations, borrowings, and financing;

4.2.2 Disseminate information about its activities without restraint;

4.2.3 հիմնադրել մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներ.

4.2.4 պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից Օրենքով սահմանված կարգով ստանալ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար.

4.2.5 ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ և հիմնարկներ.

4.2.6 ստեղծել տնտեսական ընկերություններ (այդ թվում վարկային և այլ մասնագիտացված կազմակերպություններ) կամ լինել նրանց մասնակից.

4.2.7 ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքել պայմանագրեր.

4.2.8 իրականացնել գիտական հետազոտություններ և ծրագրերի մշակումներ.

4.2.9 աջակցել ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից առաջարկված կրթական, գիտական, ձեռնարկատիրական բնույթի նախաձեռնությունների իրականացմանը.

4.2.10 օրենսդրությամբ սահմանված կարգով ձեռք բերել, ստանալ, վարձակալել կամ այլ պայմաններով, այդ թվում՝ նաև անվճար, օգտագործել անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտ, օրենքով չարգելված այլ գույք.

4.2.11 օտարել կամ վարձակալության և անհատույց օգտագործման հանձնել Հիմնադրամին պատկանող ցանկացած անշարժ և շարժական գույք.

4.2.12 ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում դրամաշնորհների, նվիրատվությունների, փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ փոխառություններ (վարկեր), դրամաշնորհներ, նվիրատվություններ այդ թվում՝ արտարժույթով.

4.2.13 կնքել համաձայնագրեր օտարերկրյա ոչ առևտրային, ոչ կառավարական կազմակերպությունների հետ, իր աշխատակիցներին և այլ անձանց գործուղել արտասահմանյան երկրներ, հրավիրել այլ երկրներից քաղաքացիներ.

4.2.14 Հիմնադրամն Օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան, կարող է անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ պետական կազմակերպություններին:

4.3. Հիմնադրամը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն միայն այն դեպքում, երբ դա ծառայում է իր նպատակներին:

Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել անձամբ կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

Հիմնադրամն իրավունք ունի անձամբ զբաղվել միայն սույն կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով:

4.4. Հիմնադրամը պարտավոր է՝

1. գործել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Օրենսդրությանը և սույն

4.2.3 Establish press and other mass media means;

4.2.4 Receive information necessary for the accomplishment of its statutory goals from state and local self-governance bodies, in the manner stipulated by the Law;

4.2.5 Create separated subdivisions and institutions;

4.2.6 Create commercial/business organizations (including credit and other specialized organizations) or to participate in them;

4.2.7 Sign agreements with natural and legal persons;

4.2.8 Carry out scientific researches and develop projects;

4.2.9 Assist in implementation of educational, scientific, entrepreneurship initiatives proposed by natural and legal persons;

4.2.10 Acquire, receive, rent or otherwise (including for gratis) use real estates, fixed assets, means of transport and other property not forbidden by the law;

4.2.11 Alienate or lease out and provide for free use any immovable and movable property owned by the Foundation;

4.2.12 Form its financial resources independently, including through attraction of grants, donations, borrowed funds, receive borrowings (loans), grants, donations, including in foreign currency, in the Republic of Armenia and other states;

4.2.13 Sign agreements with foreign non-commercial, non-governmental organizations, and sent its employees to business trips in foreign countries and invite citizens of other countries;

4.2.14 Provide assistance to international and foreign non-governmental organizations in accordance with the RA legislation and this Charter.

4.3. The Foundation may carry out entrepreneurial activities solely if they serve the goals of the Foundation.

The Foundation may carry out entrepreneurial activities directly, or it may create or participate in commercial organizations established for those purposes.

The Foundation has the right to carry out only such entrepreneurial activities, which are envisaged in its Charter.

4.4. The Foundation shall:

1. Act in compliance with the RA Constitution, legislation and this Charter;

կանոնադրությանը համապատասխան.

2. օրենքով սահմանված կարգով վարել գործառնություն և հաշվապահական հաշվառում.
 3. օրենքով նախատեսված դեպքերում և կարգով տեղեկատվություն ու հաշվետվություններ ներկայացնել պետական մարմիններ.
 4. իրականացնել օրենքներով սահմանված այլ պարտականություններ:
- 4.5. Օրենքով նախատեսված անձանց, ինչպես նաև իրավասու պետական մարմինների պահանջով Հիմնադրամը պարտավոր է օրենսդրությամբ նախատեսված ժամկետում նրանց ընձեռնել կանոնադրության, կանոնադրության լրացումների և փոփոխությունների հետ ծանոթանալու հնարավորություն:
- 4.6. Անօրինական գործունեություն ծավալելու համար Հիմնադրամը և Հիմնադրամի պաշտոնատար անձինք կրում են օրենքով սահմանված պատասխանատվություն:
- 4.7. Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող գույքով:
- 4.8. Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում Հիմնադրի պարտավորությունների, իսկ Հիմնադիրը պատասխանատվություն չի կրում Հիմնադրամի պարտավորությունների համար:

5. Հիմնադրամի նպատակները և ձեռնարկատիրական գործունեությունը

- 5.1. Հիմնադրամի նպատակներն են՝
- աջակցել գյուղատնտեսության, հարակից ճյուղերի և գյուղական համայնքների զարգացմանը,
 - իրականացնել բարեգործական, աջակցության և զարգացման ծրագրեր գյուղատնտեսական ոլորտում և գյուղատնտեսության հետ առնչվող տնտեսության ոլորտներում,
 - իրականացնել բարեգործական, աջակցության և զարգացման ծրագրեր՝ սոցիալական, գիտական, բնապահպանական, կրթական և այլ ոլորտներում:
- 5.2. Վերոնշյալ նպատակների իրականացման համար, Հիմնադրամը, օրենքով սահմանված կարգով, իրականացնում է ֆինանսական, մասնագիտական, նյութական և այլ տիպի զարգացման ծրագրեր, ինչպես նաև տրամադրում է փոխառություններ: Ֆինանսական, մասնագիտական, նյութական և այլ տիպի զարգացման ծրագրեր, ինչպես նաև տրամադրում է փոխառություններ:
- 5.3. Հիմնադրամն իր նպատակների իրականացման համար, կարող է ինքնուրույն իրականացնել հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակները.

2. Keep records and accounting in the manner stipulated by the law;
 3. Submit information and reports to state bodies in cases and in the manner stipulated by the law;
 4. Fulfill other responsibilities envisaged by this and other laws.
- 4.5. By request of persons envisaged by law, as well as authorized state bodies, the Foundation, within the period prescribed by legislation, shall grant them an opportunity to familiarize themselves with its Charter, amendments, and restatements thereto.
- 4.6. The Foundation and its officials shall bear responsibility envisaged by the law for carrying out illegal activities.
- 4.7. The Foundation shall be responsibility for its liabilities by its own property.
- 4.8. The Foundations shall not bear responsibility for liabilities of its Founder, and the Founder shall not bear responsibility for liabilities of the Foundation.

5. Goals and Entrepreneurial Activities of the Foundation

- 5.1. The goals of the Foundation include:
- Assistance to the development of agriculture, related spheres and rural communities;
 - Implementation of charitable, aid and development project/programs in the agricultural sector and industries related to agriculture.
 - Implementation of benevolent/charitable, aid and development programs in social, scientific, environmental, education and other areas.
- 5.2. With the view of fulfillment of the above-mentioned goals, the Foundation, as proscribed by law implements financial, professional, material and other development projects, as well as provides loans.
- 5.3. The Foundation, with the view of fulfillment of its goals, may independently implement the following types of entrepreneurial activities:

- խորհրդատվություն և այլ ծառայությունների մատուցում`
- մեքենաների, սարքավորումների, գյուղատնտեսական ներդրանքների և այլ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերում, տրամադրում և վաճառք.
- գյուղատնտեսության և հարակից ոլորտների առևտրա - միջնորդային գործունեություն (ոչ բորսային).
- ներդրումների իրականացում:
- Consultations and provision of other services;
- Acquisition, provision and sales of machinery, equipment, agricultural inputs and other tangible and intangible assets;
- Commercial-intermediation activities (other than stock exchange activities);
- Investments in capital markets.

6. Հիմնադրամի գույքը

6.1. Հիմնադրամը, որպես սեփականություն, կարող է ունենալ առանձնացված գույք (շենքեր, շինություններ, արտադրական կարողություններ, սարքավորումներ, այլ գույք` ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները, ինչպես նաև ոչ նյութական ակտիվներ և մտավոր գործունեության արդյունքներ` ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները) և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

6.2. Հիմնադրամի գույքի արժեքն արտացոլված է Հիմնադրամի հաշվեկշռում:

6.3. Հիմնադրամի սկզբնական գույքի արժեքը կազմում է 5 000 000 (Հինգ միլիոն) ՀՀ դրամ:

6.4. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներն են`

- հիմնադիրների ներդրումը.
- ֆիզիկական և իրավաբանական անձանց նվիրատվությունները և նվիրաբերությունները, այդ թվում` օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների նվիրատվությունները և նվիրաբերությունները.
- դրամաշնորհներ պետական և ոչ պետական կազմակերպություններից, արտասահմանյան և միջազգային կառույցներից.
- Հիմնադրամի և իր ստեղծած կամ իր մասնակցությամբ տնտեսական ընկերությունների ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցները.

- Օրենքով սահմանված կարգով կազմակերպված հանգանակությունները.

- օրենքով չարգելված ձևերով ձեռք բերված այլ միջոցները:

6.5. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել ի շահ իր Հիմնադրի, Հիմնադրամի մարմինների անդամների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողների, բացառությամբ աշխատողների աշխատավարձի և Հիմնադրամի մարմինների

6. Property of the Foundation

6.1. The Foundation may have separated property at its ownership (buildings, structures, dwelling, production capacities, equipment and other property, including monetary funds, securities and other property rights, as well as non-material assets and outcomes of intellectual activities, including intellectual property rights), and bears responsibility for its liabilities by such property.

6.2 The value of property of the Foundation is reflected in the balance sheet of the Foundation.

6.3 The initial value of the Foundation's property is AMD 5,000,000 (five million).

6.4 The sources of formation of the Foundation property are as follows:

- The Founders' contribution;
- Donations and contributions from natural and legal persons, including donations and contributions from foreign citizens, legal entities and international organizations;
- Monetary allocations from state organizations and NGOs, foreign and international institutions
- Funds received from entrepreneurial activities carried out by the Foundation, or commercial organizations created by the Foundation or to which the Foundation participates;

- Funds raised in the manner stipulated by the law;

- Other funds obtained in the manner not prohibited by the law;

6.5. The Foundation property may not be used for the benefit of its Founder, members of executive bodies, nor the staff of the Foundation, other than expenses related to payment of salaries to Foundation employees and to reimbursement of

անդամների պարտականությունների կատարմամբ պայմանավորված՝ փոխհատուցման ենթակա ծախսերի: Իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից որոշակի նպատակներով Հիմնադրամին տրված նվիրաբերությունը կարող է օգտագործվել այլ նպատակներով՝ միայն նվիրաբերողի համաձայնությամբ: Հանգանակությունից ստացված միջոցները կարող են ծախսվել միայն այն նպատակով, որը հայտարարվել է նախապես:

6.6. Յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո Հիմնադրամը պարտավորվում է հաշվետվություններ հրատարակել օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

7. Հիմնադրամի մարմինները: Հոգաբարձուների խորհուրդ

7.1. Հիմնադրամն իր գործունեությունն իրականացնում է իր մարմինների միջոցով: Հիմնադրամի մարմիններն են հոգաբարձուների խորհուրդը և տնօրենը:

7.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է:

7.3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ ֆիզիկական անձինք, այդ թվում Հիմնադիրը:

7.4. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջին կազմը կազմավորում է Հիմնադիրը: Հոգաբարձուների խորհրդի քանակական կազմը բաղկացած է առնվազն 5 (հինգ) հոգուց:

7.5. Հոգաբարձուների խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ:

7.6. Հոգաբարձուների խորհրդի նախագահին ընտրում է հոգաբարձուների խորհուրդը՝ խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

7.7. Հոգաբարձուների խորհրդի անդամներն իրենց պարտականությունները կատարում են առանց վարձատրության՝ հասարակական հիմունքներով: Հոգաբարձուների խորհրդի անդամների համար կարող է սահմանվել փոխհատուցում նրանց այն ծախսերի համար, որոնք կապված են հոգաբարձուների խորհրդի անդամի պարտականությունների կատարման հետ: Փոխհատուցման վճարման կարգը սահմանում է հոգաբարձուների խորհուրդը:

7.8. Հոգաբարձուների խորհրդի անդամները ընտրվում են 3 տարի ժամկետով:

7.9. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունը դադարում է՝

1. նրա գրավոր դիմումի հիման վրա.
2. նրա կողմից իր պարտականությունները

expenses related to the fulfillment of duties of members of the Foundation bodies. Contributions donated to the Foundation by legal or natural persons for the accomplishment of certain goals, may be used for other goals, only by the consent of the contributor. Funds received through fund raising may be spent only for the accomplishment of goals that have been announced in advance.

6.6. At the end of each financial year, the Foundation is obliged to publish the reports in conformity with the procedure and term prescribed by the legislation.

7. Foundation Bodies: Board of Trustees

7.1. The Foundation carries out its activities through its bodies. The bodies of the Foundation are the Board of Trustees and the Director.

7.2. The Board of Trustees is the supreme management and supervision body of the Foundation.

7.3. Legal capable individuals who have attained the age of 18 may serve members of the Foundation, including the Founder.

7.4. The Founder shall assign the first membership of the Foundation's Board of Trustees. The quantitative composition of the Board of Trustees shall be at least 5 (five) members.

7.5. Members of the Board of Trustees may not serve as members of other bodies of the Foundation.

7.6. The Board of Trustees shall elect the Chairman of the Board of Trustees from among its members, by simple majority of total votes.

7.7. Members of the Board of Trustees of the Foundation shall fulfill their duties on a voluntary basis, without remuneration. Reimbursement may be envisaged for members of the Board of Trustees for such expenses, which are connected with fulfillment of their duties as members of the Board of Trustees. The Board of Trustees shall define the manner of payment of reimbursement.

7.8. Members of the Board of Trustees shall be elected for a three-year term of office.

7.9. The power of a member of the Board of Trustees shall cease in cases and on the grounds as follows:

1. based on his/her written letter of resignation;
2. By at least 3/4 votes of other members of the

պատշաճ չկատարելու դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4 - ուլ.

3. լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում.
4. նրա մահվան դեպքում:

7.10. Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները համարվում են դադարած՝ նրա դիմումը ներկայացնելու հաջորդ օրվանից:

7.11. Հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու մասին տեղեկացված լինելու օրվանից ոչ ուշ, քան օրենքով սահմանված ժամկետում հիմնադրամի կառավարիչը տեղեկացնում է հիմնադիրներին, հոգաբարձուների խորհրդի անդամներին նշանակած անձանց կամ մարմիններին, հիմնադրամի մարմիններ

7.12. Հոգաբարձուների խորհրդի նոր անդամին ընտրում է հոգաբարձուների խորհուրդը՝ նախկին անդամի լիազորությունները դադարելու օրվանից ոչ ուշ, քան օրենսդրությամբ սահմանված ժամկետում օրվա ընթացքում՝ հոգաբարձուների խորհրդի անդամների ձայների երկու երրորդով: Եթե թեկնածուներից ոչ մեկը չի ստացել ընտրվելու համար ձայների առավելագույն քանակ, ապա առավելագույն ձայներ ստացած երկու թեկնածուների միջև անցկացվում է կրկնակի քվեարկություն: Ընտրված է համարվում այն թեկնածուն, որը ստացել է ձայների առավելագույն քանակ, սակայն ոչ պակաս, քան հոգաբարձուների խորհրդի ներկա գտնվող անդամների ձայների կեսից ավելին:

7.13. Հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամների լիազորությունները դադարելու դեպքում Հիմնադրամի Հիմնադիրը երեք ամսվա ընթացքում համարում է հոգաբարձուների խորհրդի կազմը կամ դիմում է դատարան՝ Հիմնադրամը լուծարելու համար:

7.14. Հոգաբարձուների խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հոգաբարձուների խորհրդի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են հոգաբարձուների խորհրդի անդամների կեսից ավելին: Հոգաբարձուների խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող անդամների ձայների երկու երրորդով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոնադրությամբ:

7.15. Հոգաբարձուների խորհրդի նախագահի, Հիմնադրամի տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի վերակազմակերպման, լուծարման և կանոնադրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու որոշումներն ընդունվում են հոգաբարձուների խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների երկու երրորդով:

7.16. Եթե հոգաբարձուների խորհրդի նիստում

Board of Trustees, if a member fails to fulfill his/her responsibilities duly;

3. In case of expiry of the his/her term of office;
4. In case of his/her death.

7.10. Powers of a member of the Board of Trustees shall be deemed ceased on the day following the date of submission of his/her letter of resignation;

7.11. The Director should notify the Founders, members of The Board of Trustees, those who nominated members of Board and governing bodies of the Foundation , about the occurrence of a vacancy in the membership of the Board of Trustees, not later than within the period prescribed by law after being informed about the opening of the vacancy.

7.12. The new member of the Board of Trustees shall be elected by two-thirds of affirmative votes of the Board members, within the period proscribed by legislation after the termination of his/her powers. If none of the candidates receives the maximum number of affirmative votes required for election, the second voting shall takes place between the two candidates having received the maximum number of votes. The candidate who receives the maximum number of votes, yet not less than half of the votes of present members of the Board of Trustees, shall be considered elected.

7.13. In case of termination of powers of all members of the Board of Trustees, the Founder of the Foundation shall complete the membership of the Board of Trustees or apply to the court for liquidation of the Foundation.

7.14. The Board of Trustees fulfills its activities through sessions. The session of the Board of Trustees shall be deemed competent, if attended by more than half of its members. Decisions of the Board of Trustees shall be made by simple majority votes of members present at the session, unless otherwise stipulated by this Charter.

7.15. Decisions regarding election and dismissal of the Chairman of the Board of Trustees or the director of the Foundation, as well as decisions regarding reorganization or liquidation of the Foundation, or making amendments and supplements in the Charter of the Foundation shall be made by two-thirds of votes of all members of the Board of Trustees.

7.16. If during the session of the Board of Trustees,

քննարկվում է խորհրդի որևէ անդամի կամ նրա հետ փոխկապակցված անձի (ծնող, ամուսին, զավակ, քույր, եղբայր, ազգական, խորթ երեխա, ամուսնու (կնոջ) ծնողներ, քույր, եղբայր) գույքային կամ այլ շահերի վերաբերյալ հարց, ապա հոգաբարձուների խորհրդի տվյալ անդամը քվեարկությանը չի մասնակցում:

7.17. Հոգաբարձուների խորհրդի անդամը, իր լիազորությունների շրջանակներում պարտավոր է հոգ տանել Հիմնադրամի պատշաճ գործունեության ապահովման, Հիմնադրամի հասարակական ճանաչման, զարգացման, գույքի պահպանման և նյութատեխնիկական բազայի բարելավման մասին:

7.18. Հոգաբարձուների խորհրդի իրավասությանն են պատկանում՝

1. Հիմնադրամի ռազմավարական ծրագրերի հաստատումը.
2. Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.
3. հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.
4. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.
5. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նոր անդամների ընտրությունը և Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
6. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահի, տնօրենի ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.
7. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.
8. տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման մասին որոշումների ընդունումը.
9. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.
10. Տարեկան առնվազն մեկ անգամ տնօրենի հաշվետվությունների լսումը.
11. իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.
12. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.
13. հոգաբարձուների խորհրդի գործունեության կանոնակարգի հաստատումը.
14. սեփականության իրավունքով Հիմնադրամին պատկանող անշարժ գույքի հետ կապված գործարքների կնքման մասին որոշումների ընդունումը, եթե անշարժ գույքի արժեքը

the Board discusses issues concerning property or other interests of one of the members of the Foundation's Board or any person related to him/her (parent, spouse, child, siblings, stepchild, in-law parents, and in-law sister, brother), the particular member of the Board of Trustees shall not participate in the voting.

7.17. The member of the Board of Trustees, within its powers, shall take care of ensuring proper activities, public recognition, and development, safekeeping of property and improvement of material and technical basis of the Foundation.

7.18. Powers of the Board of Trustees include:

1. Approval of strategic programs of the Foundation;
2. Approval of the Foundation's budget and revisions therein, financial statements and annual activity reports of the Foundation;
3. Approval of the procedure on management of the Foundation's property;
4. Adoption of a decision regarding reorganization of the Foundation;
5. Election of new members of the Foundation Board of Trustees and adoption of decisions regarding early termination of powers of members of the Board of Trustees;
6. Adoption of decisions regarding election of the Chairman of the Board of Trustees and the director, and early termination of their powers;
7. Adoption of decisions concerning the making amendments and supplements to the Charter of the Foundation, approval of new edition of the Charter;
8. Adoption of decisions regarding creation of commercial companies or participation in them, as well as decisions on creation of separated subdivisions and institutions, and the approval of their charters.
9. Supervision of the financial-economic activities of the Foundation;
10. Hearing reports of the director of the Foundation at least once a year;
11. Control over the process of implementation of decisions of the Board of Trustees;
12. Election of the person who shall conduct audits (auditor);
13. Approval of the activity regulation of the Board of Trustees;
14. Adoption of decisions on execution of transactions related to property owned by the Foundation, if the value of the property exceeds ten million Armenian drams.

- գերազանցում է տաս միլիոն դրամը:
15. Հիմնադրամի կազմակերպչական կառուցվածքի և հաստիքացուցակի հաստատում,
16. Օրենքով, սույն կանոնադրությամբ նախատեսված, ինչպես նաև Հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը:
- 7.19. Հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը չեն կարող փոխանցվել այլ մարմնի:
- 7.20. Հոգաբարձուների խորհրդի նախագահն ընտրվում է հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից 3 տարի ժամանակով:
- 7.21. Հոգաբարձուների խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին, կամ ընտրել նոր նախագահ՝ իր անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:
- 7.22. Հոգաբարձուների խորհրդի նախագահը՝
1. կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի աշխատանքները.
 2. գումարում է հոգաբարձուների խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.
 3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը:
 4. Օրենսդրությամբ նախատեսված այլ գործառնություններ
- 7.23. Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները, հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:
- 7.24. Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում են ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից: Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստեր կարող են հրավիրվել հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3 - ի պահանջով՝ հոգաբարձուների խորհրդի նախագահի կողմից՝ համապատասխան պահանջը ներկայացնելուց օրենքով սահմանված ժամկետում: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ: Եթե նշված ժամկետում հոգաբարձուների խորհրդի նախագահը նիստ չի հրավիրում, ապա նիստ կարող են հրավիրել նման պահանջ ներկայացրած անձինք:

15. Approval of Organizational structure and position list of the Foundation
16. Exercising of other powers envisaged by this Charter, as well as powers not vested in other bodies of the Foundation.
- 7.19. Powers reserved to the Board of Trustees cannot be delegated to other body.
- 7.20. The Chairman of the Foundation's Board of Trustees shall be elected by members of the Board of Trustees for a three-year term.
- 7.21. At any time, the Board of Trustees may reelect the Chairman or elect a new Chairman by the majority of votes of its members.
- 7.22. The Chairman of the Board of Trustees:
1. Organizes the work of the Board of Trustees;
 2. Convenes sessions of the Board of Trustees and chairs them;
 3. Organizes taking of minutes of sessions.
 4. Other functions prescribed by legislation
- 7.23. In case of absence of the Chairman of the Board of Trustees, one of the members of the Board of Trustees shall perform his/her duties, by the decision of the Board of Trustees.
- 7.24. The Chairman of the Board of Trustees shall convene sessions of the Board of Trustees at least once a year. The Chairman of the Board of Trustees may convene special sessions of the Board of Trustees by the request of 1/3 of its members, within 30 days following the date of submission of such request. Sessions of the Board of Trustees may be held via electronic mail or other means of communication.
- If the Chairman of the Board of Trustees does not convene a session within the stated period, than the session may be convened members who have submitted such request.

8. Հիմնադրամի կառավարիչը

8.1. Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, որին ընտրում և պաշտոնից ազատում է հոգաբարձուների խորհուրդը: Նրա պաշտոնում առաջին անգամ նշանակում կարող է կատարել նաև Հիմնադիրը: Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են Օրենքով, սույն կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի

8 Director of the Foundation

8.1. The director of the Foundation manages the current activities of the Foundation. The director of the Foundation is elected and dismissed by the Board of Trustees. For the first time the director may be appointed by the Founder. Rights and responsibilities of the director of the Foundation are defined by the Law, the Charter of the Foundation and the contract signed with him/her. On behalf of

անունից պայմանագիրը ստորագրում է հոգաբարձուների խորհրդի նախագահը կամ հոգաբարձուների խորհրդի լիազորած այլ անձ:

8.2. Տնօրենի իրավասությանն են պատկանում Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ Օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված՝ հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի:

Տնօրենը կազմակերպում է հոգաբարձուների խորհրդի որոշումների կատարումը:

Տնօրենին ընտրում և պաշտոնից ազատում է հոգաբարձուների խորհուրդը:

8.3. Տնօրենը՝

1. տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Հիմնադրամի անունից: Ընդ որում, անշարժ գույքին առնչվող գործարքները նա կնքում է սույն կանոնադրությամբ սահմանված կարգով.
2. ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում.
3. գործում է առանց լիազորագրի.
4. տալիս է լիազորագրեր.
5. սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային.
6. բանկերում բացում է Հիմնադրամի ընթացիկ, հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
7. հոգաբարձուների խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգերը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը.
8. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, կատարման համար տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
9. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Հիմնադրամի աշխատակիցներին.
10. նշանակում է Հիմնադրամի փոխտնօրեններ, որոնցից մեկը տնօրենի հանձնարարությամբ՝ նրա բացակայության դեպքում, իրականացնում է տնօրենի պարտականությունները.
11. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ:

8.4. Տնօրենը պարտավոր է ապահովել Հիմնադրամի պատշաճ գործունեությունը, հոգ տանել Հիմնադրամի հասարակական ճանաչման, զարգացման, գույքի պահպանման և նյութատեխնիկական բազայի բարելավման մասին:

the foundation, the contract is signed by the Chairman of the Board of Trustees or other person authorized by the Board

8.2. All matters related to management of current activities of the Foundation are reserved to the powers of the director, except for matters reserved to the powers of the Board of Trustees stipulated by the Law and this Charter.

The Director organizes implementation of decisions of the Board of Trustees.

The director of the Foundation is appointed and dismissed by the Board of Trustees.

8.3. The Director:

1. Manages the property of the Foundation, including financial means, and concludes transactions on behalf of the Foundation: the director concludes transactions related to real estate in the manner stipulated by the Charter;
2. Represents the Foundation in the Republic of Armenia and foreign states;
3. Acts without a power of attorney;
4. Issues powers of attorney;
5. signs contracts, including employment contracts, in the established manner;
6. Opens the Foundation's current, settlement and other accounts (including in foreign currency) with banks;
7. Submits for the approval of the Board of Trustees internal performance /work/ manual of the Foundation, charters of the Foundation's separated subdivisions and institutions, and commercial organizations established by the Foundation, the Foundation's administrative-organizational structure, and list of position and salary scale;
8. Within its powers issues orders, decrees, binding instructions and supervises their implementation;
9. In a stipulated manner hires and dismisses from work the employees of the Foundation;
10. Appoints deputy directors of the Foundation and assigns one of them to fulfill director's responsibilities upon his/her absence;
11. Applies rewarding and disciplinary measures towards employees of the Foundation.

8.4. The director shall ensure proper activities of the Foundation and take care of its public recognition, development, safekeeping of property and improvement of material and technical basis.

9. Հիմնադրամի մարմինների նիստերի արձանագրությունները

9.1. Հիմնադրամի մարմինների նիստերն արձանագրվում են: Արձանագրությունը ստորագրվում է նիստին մասնակցող խորհրդի անդամների կողմից:

9.2. Արձանագրությունում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝

1. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.
2. նիստին մասնակցելու իրավունք ունեցող անձանց (այդ թվում կառավարման մարմինների անդամների) քանակը.
3. նիստին մասնակցած անձանց քանակը (այդ թվում կառավարման մարմինների անդամների), անունները՝ նշելով Հիմնադրամում զբաղեցրած պաշտոնը..
4. նիստի օրակարգը:

Արձանագրությունը պետք է պարունակի նիստում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, նիստի ընդունած որոշումները:

Արձանագրությունները կազմվում են հայերենով դրանք կարող են նաև կազմվել օտար լեզվով: Տեքստերի միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն տեքստին:

Արձանագրություններից կազմված քաղվածքները պետք է բովանդակեն տեղեկություններ արձանագրությունը ստորագրած անձանց (այդ թվում՝ հատուկ կարծիք ներկայացրած անձանց) վերաբերյալ:

10. Հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունը

10.1. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված կարգով Հիմնադրամը վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական և այլ հաշվետվություններ:

11. Աշխատանքային հարաբերությունները Հիմնադրամի աշխատակազմում

11.1. Հիմնադրամի աշխատողների և Հիմնադրամի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ:

11.2. Աշխատողների աշխատանքի վարձատրության չափը սահմանվում է Հիմնադրամի ներքին իրավական ակտերով:

11.3. Աշխատանքային օրվա ռեժիմը սահմանում է տնօրենը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության հիման վրա:

12. Հիմնադրամի վերակազմակերպումը

9. Minutes of Sessions of Bodies of the Foundation

9.1. Minutes of sessions of the Foundation's bodies shall be taken.

Minutes of a session shall be signed by all members of BOARD of Trustees participating in the session.

9.2. Minutes shall include the following information:

1. The year, month, day and place of holding the session;
2. Number of individuals eligible to participate in the session; (including the amount of the management members)
3. number of participants (including the amount of the management members) noting their names and job positions;
4. Agenda of the session.

The minutes shall contain information about main provisions of speeches made during the session, agenda items put to voting and voting results, and decisions made at the session.

The minutes are compiled in Armenian; they can also be compiled in foreign languages. In case of inconsistencies between texts, preference is given to the Armenian text.

Excerpts from the minutes should include information about individuals who have signed the minutes, including those who have expressed special opinions.

10. Accounting and Financial Statements

10.1. The Foundation shall keep accounting and submit financial and statistical reports in the manner stipulated by the law and other legal acts and other reports.

11. Employment Relations with the Staff of the Foundation

11.1. Employment relations between employees and the Foundation shall be regulated by the Labor Code of the Republic of Armenia.

11.2. The size of employee's remuneration shall be defined by the internal regulations of the Foundation.

11.3. Daily work routine of the Foundation shall be established by the director, in accordance with the RA Labor Code.

12. Reorganization of the Foundation

12.1. Հիմնադրամի վերակազմակերպումը իրականացվում է Օրենսդրությամբ սահմանված կարգով:

12.2. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն Հիմնադրամի՝ միացման և միաձուլման ձևով օրենսդրությամբ նախատեսված կարգով:

12.3. Հիմնադրամի վերակազմակերպումը կատարվում է հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

12.1. The reorganization of the Foundation may occur in the manner stipulated by the RA legislation.

12.2. The Foundation may be reorganized through uniting or merging as prescribed by legislation,

12.3. The reorganization of the Foundation shall occur by the decision of the Board of Trustees.

13. Հիմնադրամի լուծարումը

13.1. Հիմնադրամի լուծարումը նրա գործունեության դադարումն է՝ առանց նրա իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

13.2. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ շահագրգիռ անձանց դիմումով:

Հիմնադրամի անունից, որպես շահագրգիռ անձ, կարող է հանդես գալ հոգաբարձուների խորհուրդը:

13.3. Հիմնադրամը կարող է լուծարվել Օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով:

13. Liquidation of Foundation

13.1. Liquidation of the Foundation is the cessation of its activities without the transfer of rights and liabilities of the Foundation to other parties/persons, in the order of legal succession.

13.2. Decision on liquidation of the Foundation may be issued only by the court, based on the application submitted by interested persons.

On behalf of the Foundation, the Board of Trustees may act as an interested person.

13.3. The Foundation may be liquidated on grounds and in the manner stipulated by the RA legislation.

14. Եզրափակիչ Մաս և Անցումային Դրույթներ

14.1 Սույն Կանոնադրությունը կազմված է հայերեն և անգլերեն լեզուներով: Տեքստերի միջև տարրնթերցումների դեպքում գերակայում է հայերեն լեզվով տեքստը:

14. Concluding and Transitional Provisions

14.1 The Charter is compiled in Armenian and English languages. In case of inconsistencies between texts, preference is given to the Armenian text.

* * *

